Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!*

# ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԽԻՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. (Բ) Կ. ԼԵՆՔԱՂԿՈՄԻ

1931 Թ.

Տեղարդի տպարան Լենինականում
պ. № 3512—տիր. 3000

14 SEP 2017

# ՀԱՄ. Կ (Բ) Կ ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿՈՒՍ ՍՏՈՐԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Իր լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ, իրականացնելով սոցիալիստական արշավն ամբողջ ճակատում, անողոք պայքար մղելով կուսակցության հիմնական գծի բոլոր շեղումների՝ գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի և «ձախ» օպորտունիզմի և նրանց հանդեպ ցուցաբերվող հաշտվողականության դեմ, կատարելով իր առաջնորդ ընկ. Ստալինի ցուցումները, մեր կուսակցությունը ձեռք բերեց վճռական հաջողություններ սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու գործում։ Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում, վորը ցույց է տալիս կապիտալիստական սիստեմի սնանկությունն ու նեխումը, մեր յերկիրը թեվակոխեց սոցիալիզմի շրջանը։

Սոցիալիստական հաղթական արշավը պրոլետարիատի, վորն իր հետևից տանում է կոլտնտեսական գյուղացիությունը և գյուղի չքավոր ու միջակ ամբողջ մասսային, հանդիպում է դասակարգային թշնամու կատաղի դիմադրությանը, վորն ընդունում է ամենատարբեր ձևեր՝ սկսած կուլակային տեռորից և ուղղակի վնասարարությունից մինչև կուլակի թափանցումը կոլտնտեսության մեջ, վերջինս ներսից պայթեցնելու նպատակով, մինչև հետադիմական տեսություններն իդեոլոգիայի ասպարեզում, մինչև սոցշինարարության բարձր տեմպի դեմ պայքարելը, մինչև մարքսիզմ-լենինիզմի գաղափարները հակահեղափոխական տրոցկիզմով կեղծելու, գլխավոր վտանգ մեծապետական շովինիզմի իդեոլոգիայի ու պրակտիկայի, և իմպերիալիստների ինտերվենցիային նպաստող տեղա-

կան նացիոնալիզմի միջոցով լենինյան ազգային քաղաքականությունը վիժեցնելու փորձերը։

Երկու ճակատում մղվող անհաշտ պայքարը, պրոլետարական կադրերի արագ աճումը՝ ինդուստրացման բարձր տեմպի հիման վրա, կոլտնտեսական կադրերի աճումը, սոցիալիստական մեծ շինարարության խանդավառությունը, որը համակել է աշխատավորության լայն մասսաներին, կուսակցական կազմակերպությունների աճումը դազգյահի բանվորներով և լավագույն կոլտնտեսականներով, պրոլետարական կորիզի հսկայական չափով. մեծանալը կուսակցական կազմակերպություններում, կուսակցականների գաղափարական-քաղաքական մակարդակի բարձրանալը և կուսակցության շուրջն աշխատավորության լայն մասսաների համախմբվելը, իդեոլոգիական ճակատում մարքսիստական-լենինյան տեսության և նրա անաղարտության համար կատարվող վճռական արշավը—ապահովում են մեր կուսակցության հիմնական գծի հետագա հաղթանակները, սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունները։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները, հաղթահարելով նացիոնալ-ուկլոնիզմը, ջախջախելով հակահեղափոխական տրոցկիզմը, ապացուցեցին, որ հավատարիմ են կուսակցության հիմնական գծին աջ ու «ձախ» օպորտունիզմի և նրա հանդեպ ցուցաբերվող հաշտվողականության դեմ մղվող պայքարում, ստեղծեցին և ամրացրին Անդրֆեդերացիայի քաղաքական ու տնտեսական զորությունը և այդ հիման վրա, հենվելով սոցիալիստական շինարարության վիթխարի նվաճումների ու Խորհրդային Միության օգնության վրա, ապահովեցին մեր հետագա հաջողություններն Անդրկովկասի ինդուստրացման ու ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները, որոնք որոշ հաջողություններ են ձեռք բերել գյուղատնտեսության վերակառուցման ասպարեզում, «ընդ



11-2512

գրկել են առավելապես աշխատանքի տեխնիկական կողմը և չեն ապահովել գյուղացիության (չքավոր և միջակ մասսաների) քաղաքական ճիշտ ղեկավարումը»։ Այդ կոպիտ սխալն ամենացայտուն կերպով արտահայտվեց չափազանցումներով մթերումների, մանավանդ Վրաստանում կատարված հացամթերումների ասպարեզում, որտեղ նկատի չեն առնվել շրջանների, մանավանդ սպառող շրջանների իրական հնարավորությունները և մի շարք շրջաններում կոլեկտիվացումը կատարվել է առանց բավականաչափ նախապատրաստական աշխատանքի և կազմակերպված կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացմանը»։

Այդ պայմաններում, երբ թույլ է յեղել գյուղական կուսկազմակերպությունների ամենօրյա պայքարը գյուղի չքավոր և միջակ մասսաների հետ իրենց կապն ամրացնելու և նրանց վրա իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար, տեղի յե ունեցել մասսայական աշխատանքի փոխարինում սոսկ վարչական մեթոդներով։ Շնորհիվ այդ սխալների և չքավորների ու բատրակների մեջ աշխատանքը թույլ լինելու, չնայած որ գյուղացիության հիմնական մասսաներում որոշ շրջադարձ է կատարվել դեպի գյուղի սոցիալիստական վերակառուցումը, կուլակները և ջախջախված հակահեղափոխական կուսակցությունների բեկորները հնարավորություն ստացան աշխուժացնել իրենց ազդեցությունը գյուղում։ Այդ սխալները չեն հայտաբերվել և չեն ուղղվել մինչև Համ. Կ(բ)Կ-ի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշումը։

Անդրյերկոմի հին ղեկավարությունը չի ապահովել Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի այն դիրեկտիվի կատարումը, որը պահանջում է ուժեղացնել Անդրկովկասյան Ֆեդերացիայի օրգանների ղեկավար դերը. միաժամանակ ծավալելով Անդրֆեդերացիայի մեջ մտնող ազգային հանրապետությունների լայն ինքնագործունեությունն ու տնտեսական նախաձեռնությունը։ «Անդրյերկոմը թույլ է տվել չափազանց մեծ կենտրոնացում Անդրֆեդերացիայի տնտեսական և

կուլտուրական շինարարության ղեկավարության ասպարիզում, վորի արդյունքն ե յեղել հանրապետական օրգանների դիմազրկումը մի շարք ճյուղերում»։

Անդրկովկասի կուսակցական կազմակերպության մեջ, վորն աճել ե գաղափարականորեն և քաղաքականորեն և ամրացել ե կուսակցության հիմնական գծի համար մղվող պայքարում, դեռ մինչև այժմ ել չկա անհրաժեշտ միաձուլություն և բոլշևիկյան համախմբվածություն, շնորհիվ ինքնաքննադատության ճնշման, ներկուսակցական դեմոկրատիայի խեղաթյուրման, վորոնք պատվաստել եր Անդրյերկոմի հին ղեկավարությունը, վորը հենվում եր հանրապետական կազմակերպությունների գոյություն ունեցող անսկզբունք խմբավորումների վրա, օգտագործելով նրանց Բագվի կազմակերպության բոլշևիկյան ղեկավարության դեմ իր մղած պայքարում։

Մատնանշելով քաղաքական այդ սխալները և թերությունները, Համ. Կ(բ)Կ-ի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը կոնկրետորեն ցույց ե տալիս այն ուղիները, վորով պետք ե ընթանան Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները, ուղղելով իրենց կատարած սխալները, վորպեսզի կարողանան ավելի նոր բարձր աստիճանի հասցնել Անդրկովկասի սոցիալիստական շինարարությունը։

Անդրյերկոմը նախազգուշացնում ե կուսկազմակերպություններին, վոր օպորտունիստական, մեծապետական և նացիոնալ-ուկլոնիստական տարրերը փորձում են հանրապետական օրգանները դիմազուրկ դարձնելու պրակտիկային վերաբերյալ Կենտկոմի ընդունած վորոշումը մեկնաբանել վորպես Անդրֆեդերացիայի օրգանների ղեկավար դերի թուլացում։ Անդրկովկասի կուս կազմակերպությունները պետք ե ջախջախիչ հակահարված տան և կտան այդպիսի փորձերին։

Անդրկովկասում կուսօրգանների հաշվետու վերընտրական կամպանիան պետք ե ընթանա վորպես պայքար ընդդեմ կուսակցական գծի խեղաթյուրման գյուղացիական, ազգային և կազմակերպչական հարցերում, հանուն կատարված սխալների և չափազանցումների ուղղման։ Այդ կամպանիայի հիմքը պետք ե կազմեն Համ. Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումները՝ Անդրկովկասի կուս կազմակերպությունների զեկուցումների առթիվ, Համ. Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի վորոշումները և ընկ. Ստալինի վեց ցուցումները։



Յելնելով վերոհիշյալից, Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմը վորոշում ե՝

1. Հաշվետու վերընտրական կամպանիան անցկացնել ներկուսակցական լայն դեմոկրատիայի և բոլշևիկյան ծավալուն ինքնաքննադատության նշանաբանով, «առանց նըկատի ունենալու անձնավորությունները», վորի նպատակը պետք ե լինի ուղղել սխալները, հաստատել կազմակերպության մեջ «միաձուլություն և բոլշևիկյան համախմբվածություն», բարձրացնել արդյունաբերական շինարարության տեմպը, «օգտագործել Անդրկովկասի գյուղատնտեսության պայմաններում թաքնված վիթխարի հնարավորությունները», ամրացնել կոլտնտեսությունները կազմակերպչորեն, տնտեսապես և քաղաքականապես ու այդ հիման վրա ել ավելի զարգացնել կոլտնտեսական շարժումը, վճռական բեկում ստեղծել տրանսպորտի աշխատանքում, բարելավել մատակարարումը և մասսաների կուլտուրական-կենցաղային սպասարկումը։

2. Հաշվետվություններին և վերընտրություններին պետք ե նախորդի տեղական կազմակերպությունների կողմից ընտրված ինքնաստուգման բրիգադների աշխատանքը, վորոնք գործելու յեն վերադաս կազմակերպությունների հսկողությամբ և ղեկավարությամբ։ Ստուգման ժամանակ լուսաբանման յենթակա խնդիրներից յուրաքանչյուր բրիգադի հանձնարարվելու յեն վորոշ կարգի հարցեր։

3. Ինքնաստուգման առաջ դրվում ե լուսաբանել հետևյալ կարգի հարցերը. ա) կազմակերպությունների կուսակցական կարգապահության դրությունը. բ) կուսաշխատանքի վերակառուցումը և նրա ծանրության կենտրոնի

փոխադրումը դեպի ստորին օղակները. գ) կուսակցական կադրերի նախապատրաստումը և առաջ քաշումը. դ) կազմակերպության կազմն ու նրա քանակական ու վորակական աճումը. ե) կուսդաստիարակչական աշխատանքի, ինտերնացիոնալ դաստիարակության դրությունը և լենինյան ազգային քաղաքականության մեկնաբանումը. զ) ընկ. Ստալինի վեց ցուցումների կատարումը. է) մասսայական աշխատանք՝ անկուսակցական ակտիվի և հարվածայինների ներգրավումը և դաստիարակումը, աշխատանքի սոցիալիստական ձևերի կազմակերպումը ը) յերիտասարդական կազմակերպությունների ղեկավարումը. թ) կանանց շրջանում տարված աշխատանքը. ժ) կուլտ-կենցաղային սպասարկման խնդիրները. ի) խորհրդային առևտրի և մատակարարման խնդիրները. լ) անգրագիտության վերացումը, ընդհանուր պարտադիր ուսում և կադրերի պատրաստում

4. Բոլոր կուսկազմակերպությունների համար այս ընդհանուր հարցերի հետ միասին, կուսակցական կազմակերպությունները՝ ինքնաստուգման պրոցեսում պետք է լուսաբանեն այն հարցերը, վորոնք կապված են սոցիալիստական շինարարության հատուկ խնդիրների հետ՝ նրանց աշխատանքի անմիջական բնագավառում։

5. Կուսկազմակերպությունները արտադրության մեջ, պետք է ստուգեն իրենց մասնակցությունն այն պայքարում, վոր մղվում է արդֆինպլանների քանակական և վորակական ցուցանիշների, աշխատանքի ճիշտ կազմակերպման, տնտհաշվարկի, աշխատանքային կարգապահության համար, ընդդեմ հավասարեցման և դիմազրկության, հանուն հավաքագրումի կազմակերպման, հին կադրերի ճիշտ օգտագործման, նոր կադրերի պատրաստման, արտադրանքի վորակի և բոլշևիկյան տեմպերի։

6. Տրանսպորտի կուսկազմակերպություններն ինքնաստուգման ժամանակ իրենց ուշադրության կենտրոնում դնելու յեն՝ տրանսֆինպլանի կատարումը, յերկաթուղային օրգանների աշխատանքներում դիմազրկության և անպատասխանատվության լիկվիդացիան, պայքարն ընդդեմ զուգերթի վիժման, հանուն ներքին ռեսուրսների օգտագործման, խիստ տնտեսման վառելանյութի, միջոցների և նյութերի մսխման ասպարեզում, ապրանքատարության և փոխադրական կարողության ընդարձակման, նոր կադրերի պատրաստման և առաջ քաշման։

7. Գյուղի՝ կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների կուսկազմակերպություններն իրենց ուշադրության կենտրոնը պետք է դարձնեն՝ կուսկազմակերպությունների կողմից թույլ տրված սխալների ուղղումը, կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական և քաղաքական ամրապնդումը, նրանց առողջ աճումը, դրա հիման վրա, նրանց և խորհտնտեսությունների կողմից՝ պետության առաջ իրենց պարտականությունների կատարումը. աշխատանքի ճիշտ կազմակերպումը, պրոգրեսիվ գործավարձը, յեկամուտների և բերքի ճիշտ բաշխումը, ինվենտարի նկատմամբ խնամքով վերաբերվելը, նրա (ինվենտարի) մաքսիմալ օգտագործումը, ուշադիր վերաբերմունքը չքավորի, միջակի և մենատնտեսի նկատմամբ, նրան (մենատնտեսին) կոլտնտեսություն ներգրավելը, խորհրդային օրգանների հեղինակության ամրապնդումը և բարձրացնելը, մեքենա-տրակտորային կայանների ազդեցությունը, կուլակության դեմ վճռական պայքար մղելը, տեխնիկական կուլտուրաների և ագրոգրագիտության համար պրոպագանդա մղելը, պայքար մղել օպորտունիզմի, գձձողականության, անփութության դեմ գյուղի ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

8. Խորհրդային հիմնարկների կուսկազմակերպությունների ինքնաստուգումը պետք է կուսակցության անդամների ուշադրությունը կենտրոնացնի բյուրոկրատիզմի ելեմենտների վճռական վերացման, ապարատը դասակարգային խորթ ելեմենտներից մաքրելու՝ հանդեպ հանձնարարված պարտավորությունների, աշխատանքների պատասխանատվության բարձրացման վրա, կուսակցության դիրեկտիվների կատարման սիստեմատիկ ստուգման վրա,

ապարատի վողջ աշխատանքի արմատական բարելավման և աշխատավորական լայն մասսաների հետ նրա կապերն ուժեղացնելու վրա։

9. Վերընտրական կամպանիայի սկզբում՝ կուսկազմակերպությունները պետք է ուսումնասիրեն հաշվետու-վերընտրական կամպանիայի մասին Համկոմկուսի Անդրյերկոմի և համապատասխան հանրապետությունների Կ (բ) Կ ԿԿ հանած վորոշումը։ Վերընտրություններ անցկացնելիս կուսկազմակերպությունները պետք է լայն քննարկեն իրենց կուսակցական կոմիտեյի բյուրոյի հաշվետու զեկուցումը և ստուգող բրիգադի նյութերը։ Զեկուցումները և վիճաբանությունները պետք է տարվեն ներկա յեղածների մայրենի լեզվով, թարգմանվելով, բոլոր անհրաժեշտ դեպքերում։

10, Բջիջների բյուրոների կազմի թեկնածությունները դնել և ընտրել անհատաբար՝ անմիջականորեն ընդհանուր ժողովներում, խստորեն պահպանելով ներկուսակցական դեմոկրատիայի կանոնները։

11. Նոր ընտրվելիք կուսօրգանների կազմում ապահովել՝ քաղաքում դազգահի բանվորների և գյուղում բատրակների, գյուղատնտեսական բանվորների և առաջավոր կոլտնտեսականների վճռական գերակշռումը. հատուկ ուշադրություն դարձնելով ղեկավար կուսօրգանների մեջ առաջ քաշելու հարվածայիններին, համապատասխան ազգությունների բանվորներին, բանվորուհիներին և գեղջկուհիներին։

12. Անդրյերկոմի և հանրապետական ԿԿ կազմակերպչական բաժիններին՝ ուղարկել տեղերը ղեկավար աշխատավորներ և պատասխանատու հրահանգիչներին՝ հաշվետու-վերընտրական կամպանիային մասնակցելու համար։

13. Բոլոր թերթերի խմբագրություններին՝ սիստեմատիկաբար լուսաբանել հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքը։

14. Ստորին կուսօրգանների վերընտրական կամպանիայի ավարտման ժամկետ սահմանել 1932 թ. հունվարի 1-ը։



15. Հաշվետու-վերընտրական կամպանիայի հանրագումարը հանդիսանալու յե վողջ անդրկովկասյան կուսկազմակերպության բոլշեվիկյան կուսակցականության ավելի բարձր աստիճանի հասցնելը, նրա գաղափարային քաղաքական մակարդակի բարձրացումը, նրա շարքերի բոլշևիկյան համախմբումը, խմբակայնության և ատամանշչինայի բոլոր մնացորդների արմատական վերացումը, բոլշևիկյան կարգապահության ամրացումը, կուս-աշխատանքի իրական վերակառուցումը՝ ծանրության կենտրոնը փոխադրելով ստորին օղակները, կուսկազմակերպության հետագա աճումն՝ ի հաշիվ բանվորների, բատրակների, լավագույն կոլտնտեսականների, նրանց բոլշևիկյան դաստիարակությունը, նոր կադրերի առաջքաշումն՝ ամենից առաջ՝ սոցիալիստական շինարարության լավագույն հարվածայիններից, վորոնք ընդունակ են «նոր յեղանակով աշխատել, նոր յեղանակով ղեկավարել», վողջ կուսկազմակերպության պատրաստումը՝ հետագա պայքարի համար, վոր մղվելու յե կուսակցության գլխավոր գծի համար՝ յերկու ֆրոնտում՝ օպորտունիզմի բոլոր տեսակի արտահայտությունների, և ամենից առաջ, աջ օպորտունիզմի, վորպես գլխավոր վտանգի, ու նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ, սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպի, լենինյան ազգային քաղաքականության, Համկոմկուսի Կենտկոմի և մեր կուսակցության ղեկավար ընկ. Ստալինի բոլոր դիրեկտիվների կատարման համար։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը Համ. Կոմկուսի լենինյան Կենտկոմի և կուսակցության ղեկավար ընկ. Ստալինի գլխավորությամբ, հաջողությամբ վերջացնում է հնգամյակի 3-րդ վճռական տարին, ավարտելով սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը:

Մեկը մյուսի հետևից գործի յեն քցվում սոցիալիստական ինդուստրիայի գիգանտները, էլ ավելի ուժեղացնելով Խորհրդային Միության տնտեսական հզորությունը: Կուսակցությունը ձեռք է բերել մեծագույն հաղթանակներ գյուղատնտեսության վերակառուցման գործում. կոլլեկտիվացված է ԽՍՀՄ-ի չքավոր-միջակ գյուղացիական տնտեսությունների 60 տոկոսից ավելին: ԽՍՀՄ և Անդրկովկասյան Ֆեդերացիայի խոշորագույն նվաճումները ապահովեցին նաև Հայաստանի ՍԽՀ տնտեսական հիմքերի ամրացումը:

Պայքարի և շինարարության 12-րդ տարին թևակոխած Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարության հաջողությունները սոցիալիզմի կառուցման ֆրոնտում կազմում են ԽՍՀՄ և Անդրկովկասյան Ֆեդերացիայի ձեռք բերված նվաճումների անբաժան մասը:

Մեր յերկիրը հետամնաց ագրարային յերկրից վեր է ածվում ինդուստրիալ-ագրարայինի՝ աճող արդյունաբերությամբ և բարձր կուլտուրական գյուղատնտեսությամբ:

Տեքստիլի, պղնձարդյունաբերության, Արթիկ-Տուֆի և Անի-Պեմզայի (հնգամյակն ավարտել է յերեք տարում և 2 ամսում) աճման և ընդարձակմանը զուգընթաց, 1932 թվականի առաջին յեռամսյակում գործարկվում են



Ձորագեսը, յերկրորդ Յերգեսը, Քիմ-գործարանը, Ցեմգործարանը, կառուցվում են Քանաքեռգեսը և այլ կառուցումները:

Կոլեկտիվացումն ընդգրկում է բոլոր գյուղացիական տնտեսությունների 40 տոկոսը, կազմակերպված են 40 ից ավելի խորհտնտեսություն և 7 մեքենա-տրակտորային կայան:

Հայաստանի բանվոր դասակարգը խոշոր հաջողություններ է ձեռք բերել նաև կուլտուրական (պարտու. անգրագիտության վերացում), ինչպես նաև նոր կադրերի պատրաստման ֆրոնտում:

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը ձեռք է բերել այդ հաջողությունները անշեղ պայքար մղելով ընդդեմ աջ թեքման, վորպես գլխավոր վտանգի, ընդդեմ «ձախ» խոտորումների և նրանց նկատմամբ յեղած ամեն տեսակի հաշտվողականության:

Նա ձեռք է բերել այդ բոլորն աջ-«ձախ» բլոկի, անսկզբունք խմբակայնության դեմ և կուսակցական շարքերի համախմբվածության ու միաձուլության ուժեղացման համար մղած պայքարում:

Մենք գտնվում ենք հնգամյակի չորրորդ և ավարտական տարվա նախօրյակին, վորը պետք է լինի մեր նվաճումների ամրապնդման և հետագա խորացման, աշխատանքի վորակի ու շինարարության բարձր տեմպերի տարի, ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման տարի:

Ստորին կուսօրգանների առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է հանրագումարի բերի մեր կուսակցական կազմակերպությունների աշխատանքը տնտեսական պլանների կատարման համար մղած պայքարում, մշակի նրանց աշխատանքների վերակառուցման կոնկրետ միջոցառումներ՝ բոլոր ճեղքվածները լիկվիդացիայի յենթարկելու, Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ մատնանշված բոլոր սխալները բոլշևիկորեն ուղղելու, հնգամյակի 4-րդ և ավարտական տարվա պլանների կատարման գործին բոլոր կուսկազմակերպու-

թյուններին լրիվին մասնակից դարձնելու, ամբողջ կազմակերպությունն էլ ավելի համախմբելու, գաղափարական բոլշեվիկյան մակարդակն ավելի բարձր աստիճանի հասցնելու և կուսակարգապահությունն ամրապնդելու համար։

Կենտկոմն առաջարկում է հաշվետու-վերընտրական կամպանիայի հիմքում դնել՝

1. Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման,

2. Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի վորոշման և

3. Ընկ. Ստալինի 6 ցուցումների կատարման կիրառումը։

Ստորին կուսկազմակերպությունների հաշվետու-վերընտրական կամպանիան մեր արդյունաբերական կենտրոններում պետք է դառնա մի հզոր լծակ՝ հարվածայնության, սոցմրցման և բանվորների արտադրական խանդավառության նոր ալիք առաջ բերելու համար. Նա պետք է մոբիլիզացիայի յենթարկի պրոլետարիատի լայն մասսաները՝ պայքարելու տնտեսական խնդիրների և ձեռնարկությունների պլանները կատարելու, տեքստիլի և պղնձարդյունաբերության ճեղքվածքները ծածկելու, յերկաթուղային տնտեսությունն իրապես բարձրացնելու համար, հանուն առողջ շոգեկառքի և վագոնի, ընդդեմ դիմազրկության և մանր-բուրժուական հավասարեցման, հանուն ղեկավարի 6 ցուցումների վճռական կիրառման։

Նա պետք է ստուգի, թե վորչափ մեր կազմակերպություններն իրենց աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրել են ստորին արտադրական միավորները՝ ցեխը, բրիգադը, կոմպլեկտը և այլն, իրապես ամրապնդի և աշխուժացնի կուսակցական խմբերի և ողակային բջիջների աշխատանքը, ձեռք բերի կոնկրետություն և օպերատիվություն վերից վար բոլոր կուսակցական օրգանների ամբողջ աշխատանքում և բարելավի լավագույն հարվածային-հարվածայնուհիներին, առաջավոր կոլտնտեսականներին ու բատրակներին կուսակցության շարքերը ներգրավելու աշխատանքը։



Կենտկոմն առաջարկում է բոլոր կազմակերպություններին՝ լայն չափով ոգտագործել հաշվետու-վերընտրական կամպանիան բանվորների և կոլտնտեսականների նյութական կենցաղային պայմաններն իրապես բարելավելու, բանվորական մատակարարման և խորհրդային առեվտրի վերաբերյալ կուսակցության վորոշումները վճռականորեն կենսագործելու համար։ Ծավալել բոլշեվիկյան աշխատանք՝ իրացնելու Համկոմկուսի Կենտկոմի վորոշումները քաղաքային տնտեսության զարգացման, կուլտուրական շինարարության, պարտուսի և անգրագիտության լիկվիդացիայի վերաբերյալ։ Ստորին կուսորգանների հաշվետու-վերընտրական կամպանիան գյուղում պետք է վերածվի բեկման շրջանի՝ գյուղական կազմակերպությունները վճռաբար ամրապնդելու, խորհտնտեսություններում, խոշոր կոլտնտեսություններում և ՄՏ կայաններում կուսաշխատանքի ամուր հենակետեր ստեղծելու համար։

Կամպանիայի ընթացքում գյուղական կուսկազմակերպությունները վճռական շրջադարձ պետք է կատարեն տեխնիկական կուլտուրաների (բամբակ, ծխախոտ) հետագա արմատավորման, այգեգործության, խաղողագործության ու սոցիալիստական անասնապահության զարգացման աշխատանքում։

Կենտկոմը պահանջում է բոլոր շրջանային կուսկազմակերպություններից՝ կոլտնտեսական շինարարության գործում բոլոր բջիջների և կոմունիստների իրական մասնակցությունն ստուգելու հետ միասին, մաքսիմալ չափով ոգտագործել հաշվետու-վերընտրական կամպանիան՝ վճռականորեն ուղղելու կոլտնտեսական շինարարության և մթերումների պրակտիկայում թույլ տրված սխալները, վորոնք մատնանշված են Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների մեջ, կոլտնտեսությունները տնտեսապես ամրապնդելու, ընթացիկ տարվա բամբակի հավաքման կամպանիայի պլանները կատարելու, 1932 թ. բամբակի պլանի կատարումն ու 1932 թվին բամբակացան շրջանների համատարած կոլեկտիվացման ավարտումն ա-

պահովելու համար։

Հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է անցնի տնտեսական ապարատից բյուրոկրատիզմի և օպորտունիզմի ամեն տեսակ էլեմենտներին արմատախիլ անելու համար պայքար ծավալելու դրոշի տակ։

Կուսակցական լայն մասսաների ծավալուն բոլշևիկյան ինքնաքննադատությամբ պետք է մերկացնել օպորտունիստական դանդաղկոտությունը ընկ. Ստալինի վեց ցուցումները կյանքում կիրառելու, բանվոր հավաքագրելու, անհաշվարկի անցնելու և դիմազրկության ու հավասարեցման լիկվիդացիայի չենթարկելու գործում։ Առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ցելակետ դառնա տասամանշչինայի և խմբակայնության բոլոր մնացորդները վերջնականորեն արմատախիլ անելու, կուսշարքերը գաղափարապես բոլշևիկորեն էլ ավելի ամրացնելու, Դաշնակցության ազդեցության և գաղափարախոսության ամեն տեսակ արտահայտությունների դեմ անողոք պայքար ծավալելու, մեծապետական թեքման, որպես գլխավոր վտանգի և տեղական նացիոնալիզմի դեմ պայքարն ուժեղացնելու համար։

Կենտկոմը գտնում է, որ վերընտրական կամպանիայի պրոցեսում անհրաժեշտ է նույնպես թարմացնել բջիջների բյուրոների կազմը, համարձակ կերպով առաջ քաշելով և աճեցնելով նոր կադրեր լավագույն բանվոր հարվածայիններից և կոլտնտեսականներից, որոնք գործով ցույց են տվել իրենց նվիրվածությունը կուսակցությանը և նրա գլխավոր գծին։

Կենտկոմը միանգամ ևս ընդգծում է, որ հաշվետու-վերընտրական կամպանիայի կապակցությամբ կուսակցության առաջ դրված այդ բոլոր խնդիրների հաջող իրագործումը կարող է ապահովվել միայն ծավալուն բոլշևիկյան ինքնաքննադատության հիման վրա և կուսակցության գլխավոր գծի համար, երկու ֆրոնտի վրա ամեն տեսակի օպորտունիստական թեքումների և նրանց վերաբերմամբ հաշտվողականության դեմ մղվող պայքարով։



Հաստատել հետևյալ օրացուցային պլանը ստորին կուսմարմինների հաշվետու-վերընտրական կամպանիաների համար.

1. Ստորին կուսմարմինների հաշվետու-վերընտրական կամպանիան Հայաստանում անցկացնել 1931 թ. դեկտեմբերի մեկից մինչև 31-ը։

2. Դեկտեմբերի մեկից մինչև հինգը բոլոր շրջանային և քաղաքային կազմակերպություններում հրավիրել բջիջների քարտուղարների և կուսակտիվի լայն խորհրդակցություններ, քննության առնելով Հայկոմկուսի Կենտկոմի նոյեմբերի 22-ի որոշումը՝ Համ. Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշման կենսագործման միջոցառումների մասին և հաշվետու-վերընտրական կամպանիայի խնդիրները։

3. Դեկտեմբերի մեկից մինչև 10-ն անցկացնել ստորին կուս. օղակների (կուսխմբակների կազմակերպիչների, կուսկազմակերպիչների և օղակային բջիջների) վերընտրությունները։

4. Բջիջների բյուրոների վերընտրությունների կամպանիան անցկացնել հետևյալ կարգով՝

ա) Դեկտեմբերի մեկից մինչև հինգը բոլոր բջիջներում անցկացնել դռնբաց ժողովներ, ուր քննության առնել բջիջների բյուրոների վերընտրության հարցերը և Հայկոմկուսի Կենտկոմի այդ առթիվ ընդունած որոշումը. ընտրել բջիջների բյուրոների աշխատանքների ինքնաստուգման բրիգադներ։

ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐՈՒՄ ընտրել հետևյալ ինքնաստուգման բրիգադները՝

1. Արդֆինպլանի կատարման և ընկ. Ստալինի վեց ցուցումների կիրառման։
2. Կուսակցության աճման։
3. Կուսաշխատանքի և ստորին կուսօղակների (կուսխմբակներ, օղակային բջիջներ, կուսկազմակերպիչներ) աշխատանքների վերակառուցման։
4. Կուսլուսավորության։
5. Կոմյերիտմիության ղեկավարության։

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐՈՒՄ.—

1. Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի որոշումների, Անդրկովկասյան կուսկազմակերպությունների մասին Համ. Կ(բ)Կ Կենտկոմի որոշման և Հայկոմկուսի Կենտկոմի ու ԿՎՀ-ի վերջին պլենումի «գյուղական կուսկազմակերպությունների աշխատանքի մասին» որոշման ժողովրդականացման և կենսագործման բրիգադ։

2. Կուսակցության աճման։

3. Կուսաշխատանքի և ստորին կուսողակների աշխատանքի վերակառուցման։

4. Կուսլուսավորության։

5. Կոմյերիտմիության ղեկավարության բրիգադ։

Համաձայն բջիջի բնույթի, կարող են փոփոխվել կամ կազմվել լրացուցիչ բրիգադներ։

բ) Դեկտեմբերի 5-ից մինչև 15-ը ինքնաստուգման բրիգադների աշխատանքը։

գ) Դեկտեմբերի 15-ից 25-ը բջիջների բյուրոների հաշվետու-վերընտրական կամպանիա։

դ) Դեկտեմբերի 25-ից մինչև հունվարի մեկը—կուսկոլեկտիվների բյուրոների վերընտրությունները, գործարանային կոնֆերենցիաներ և գործարանային կոմիտեներ ու գյուղական կուսկոմիտեների վերընտրություններ։

5. Հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնել իսկական բոլշևիկյան ինքնաքննադատության լոզունգով, հայտաբերելով ստորին կուսմարմինների աշխատանքների բոլոր թերությունները, մշակելով կոնկրետ միջոցառումներ արագ կերպով ուղղելու բոլոր սխալները և լիովին կենսագործելու ընկ. Ստալինի ցուցումները, Համ. Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի որոշումներն ու Համ.Կ(բ) Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշումը Անդրյերկոմի և ազգային կոմկուսների կենտկոմների զեկուցումների առթիվ։

6. Առաջարկել բոլոր թերթերի խմբագրություններին, սիստեմատիկորեն լուսաբանել հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքը և առանձին կազմակերպությունների,



բջիջների ու բրիգադների փորձը։

7. Հանձնարարել Կազմբաժնին՝ մոբիլիզացիայի ենթարկել 50 հոգի Հայկոմկուսի Կենտկոմի և ԿՎՀ անդամներից ու հանրապետական աշխատողներից և նրանց ուղարկել շրջանները՝ ղեկավարելու հաշվետու-վերընտրական կամպանիան։

## Հ Կ (Բ) Կ ԼԵՆԿՈՒՍՔԱՂԿՈՄԻ ՅԵՎ ԲՎՀ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ՝ ՔԱՂԱԿՏԻՎԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԸՆԿ. ԳՈՒՄԵԴԻՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հայկոմկուսի բոլշևիկյան Կենտկոմի հմուտ ղեկավարությամբ կենսագործելով Համ. Կ (բ) Կ լենինյան Կենտկոմի և կուսակցության առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ մարտական դիրեկտիվները, Լենինականի կազմակերպությունը անողոք և անխնա պայքարով ընդդեմ գլխավոր վտանգ աջ ոպորտունիզմի, «ձախ» շեղումների և նրանց հանդեպ հաշտվողականության, վճռական հակահարված տալով Սիրցով-Լոմինաձեական բլոկին, մերկացնելով և ջախջախիչ հարված հասցնելով ատամանշչինայի և անսկզբունք խմբակային ելեմենտներին, ձեռք բերեց զգալի հաջողություններ սոցիալիստական հարձակողականի ֆրոնտներում և կուսշարքերի միասնականության ամրացման գործում։

Քաղաքի տեղական արդյունաբերության հիմնական միավորները (մեխգործարան, տպարան, փայտամշակման գործարան և այլն) ժամանակից շուտ ավարտեցին և ավարտում են հնգամյակի վճռական տարվա պլանները։ Տեղական արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ան. ռուբլիներով արտահայտված 30 թ. յեղել է 7.750 հազար, իսկ 31 թ. 12,966,900 ռ. (167 տոկ.)։ Յեթե 1930 թվին արտադրել է 2,200 հազար մետր գործվածք, ապա 1931 թվին արտադրված է 2,984 հազար մետր (130 տոկոս)։

1930 թվին արտադրվել է 6,289,300 մետր բյազ, այս տարի արտադրված է 16 միլիոն մետր (254 տոկ.)։

1930 թվին արտադրվել է 163,600 կիլոգրամ դուլպա, այս տարի արտադրված է 253,300 կիլոգրամ (155 տոկոս)։

Կենտրոնական Կոմիտեյի, որանից կես տարի առաջ



տրանսպորտի մասին կայացրած վորոշման հիման վրա յերկաթուղային կազմակերպությունները ձեռք են բերել վորոշակի նվաճումներ փուղյերթի անցման, շոգեքարշային տնտեսության ամրացման, դիմադրկության վերացման ուղղությամբ։

Յեթե անցյալ տարվա հոկտեմբերին 85 շոգեքարշը անում եյին 307,019 կիլոմետր, ապա այս հոկտեմբերին 63 շոգեքարշ կատարել են 345,170 կիլոմետր վազք։

Կուսաշխատանքի վերակառուցման ասպարեզում՝ յերեսով զգալի շրջադարձ կատարելով դեպի ցեխը, բրիգադը, ագրեգատը և այն գործում մեր կազմակերպության մի շարք կոմբջիջներ և կուս ողակներ անժխտելի հաջողություններ ձեռք բերին։ Առանցքային հարցերն այդտեղի կոմբջիջներում և ողակներում դարձել և դառնում են արտադրական պլանների կատարման խնդիրները և առաջնորդի ցուցմունքների կիրառումը։

Կուս աշխատանքների վերակառուցման գործում հաջողություններ ունեն և գյուղական մի շարք բջիջներ։ Լենինականի գյուղական ռայոնում կոլտնտեսական շարժման մեջ է ընդգրկված չքավոր-միջակային տնտեսությունների մոտ 41 տոկոսը։

Սակայն կուս օրգանների հաշվետու-վերընտրական կամպանիան հանրագումարի բերելով մեր կազմակերպության աշխատանքը տնտեսական պլանների կատարման ասպարեզում, բոլշևիկյան ԱՆՈՂՈՔ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԻ ՏԱԿ պետք է վեր հանի մեր աշխատանքի թույլ կողմերն ու թերությունները և սրի վողջ կազմակերպության ուշադրությունը մեր արդյունաբերության մի շարք ճյուղերում գոյություն ունեցող անհանդուրժելի ճեղքվածքների և թերությունների վերացման վրա։

Քաղաքային կոմիտեյի և ԲՎՀ-ի միացյալ պլենումը արձանագրում է, վոր 3-րդ վճռական տարում պլանների կատարման տեսակետից չափազանց հետ է մնացել տեքստիլ արդյունաբերությունը, վորը յերկրին պարտք է մնում այսօր մոտ 4 միլիոն ռուբլի։

Աշնանացանի կամպանիայի և բերքահավաքի պլանների կատարման գործում զգալի թերություններ ունի շաքարի կոմբինատի տեղական խորհնտեսությունը, վորը ժամանակին չկատարեց պետության հանդեպ իր ստանձնած պարտավորությունները:

Բաղկոմի և ԲՎՀ-ի միացյալ պլենումը գտնում է, վոր չնայած վերև նշած հաջողությունների, տրանսպորտի կազմակերպությունները չկարողացան բոլշևիկորեն նախապատրաստվել աշնան-ձմեռային փոխադրումներին և վճռական բեկումը չեն ապահովել շոգեքարշային տնտեսության վերջնական ամրացման, ռեմոնտի վորակի բարելավման, կրկնակի ռեմոնտի լիկվիդացիայի, հիվանդ շոգեքարշերի տոկոսի իջեցման, զուգյերթի անխախտ կիրառման, վագոնի պարկի ճկունությունն ապահովելու գործում: Միացյալ պլենումը արձանագրում է, վոր Լենինականի կազմակերպության մի շարք բջիջներ և կուսօրգաններ թույլ են վերակառուցել իրենց աշխատանքները նոր ձևերի և մեթոդների համաձայն, դեռ չեն կատարել վճռական շրջադարձը դեպի ցեխը, բրիգադը, ագրեգատը: Դեռ անբավարար են պայքարում ընկ ՍՏԱԼԻՆԻ 6 պատմական ցուցմունքների լիակատար կիրառման համար և հանդես են բերում անընդունակություն գլխավորելու մասսաների արտադրական հզոր վերելքը:

Ելնելով այս ամբողջ դրությունից, Բաղկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին հաշվետու վերընտրական կամպանիայի ընթացքում ձեռք առնել ամենակտրուկ միջոցները դեկտեմբերյան արտադրական գրոհի առաջ դրված մարտական խնդիրները կիրառելու, վերընտրական կամպանիայի հիմքում դնելով Համ Կ (բ) Կ Անդրյերկոմի և ՀԿ (բ) Կ Կենտկոմի վորոշումներով առաջադրված խնդիրների կենսագործումը և նրանց մասսայականացումն ու լուսաբանումը, ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՆՁՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ինչպես ցույց են տալիս Անդրյերկոմն ու Հայկոմկուսի Կենտկոմը,



1. ՀԱՄ. Կ (բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ի ՎՈՐՈՇՄԱՆ,

2. ՀԱՄ Կ (բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ և

3. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ 6 ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ:

Ստորին կուս. օրգանների հաշվետու-վերընտրական կամպանիան մեր բոլոր գործարաններում և կոլտնտեսություններում պետք է դառնա մի հզոր լծակ հարվածայնության, սոցմրցման և բանվորների ու կոլտնտեսականների արտադրական խանդավառության նոր վերելք բարձրացնելու համար, նա պետք է դառնա ՀԱՄԱՅՆԱԳԱՐՓԱԿ ՆՈՐ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ բոլոր պրոլետարներին, կոլտնտեսականներին, աշխատավորներին վոտքի հանելու 3-րդ վճռական տարվա վերջին ամիսը հաղթանակով պսակելու, ճեղքվածքներին վերջ դնելու և պատվով դիմավորելու հնգամյակի վերջին տարվան: Հաշվետու վերընտրական կամպանիան մի նոր ազդակ պետք է հանդիսանա բանվորական, կոլտնտեսական և աշխատավորական մասսաներում կուսակցության հեղինակության հարաճուն բարձրացման հիման վրա՝ հարվածային բանվորների, առաջավոր կոլտնտեսականների և բատրակների նոր խմբեր ներգրավելու կուս կազմակերպության շարքերը:

ՏԵՔՍՏԻԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ հաշվետու-վերընտրական կամպանիան պիտի դառնա վճռական նշանակություն ունեցող շրջան, երբ Տեքստիլի կուս կազմակերպության յուրաքանչյուր օղակ պետք է վերջնական քննություն տա, ձեռք առնի ամենակտրուկ միջոցները Բաղկոմի վերջին վորոշումով (դեկտեմբերյան գրոհի առթիվ) առաջադրված խնդիրները կիրառելու և այս ամսում վերջ դնելու խրոնիկական ճեղքվածքներին: Տեքստիլի կոմունիստներն այս ամսում պետք է գլխավոր ուժերը կենտրոնացնեն նոր գործվածքայինում և մանարանում, փոխադրելով այնտեղ պլանները գերակատարող տրիկոտաժի և հին գործվածքային գործարանի փրձ.

համառ կերպով արմատացնել անհաշվարկը, վերջնակա-
պես լիկվիդացիայի յենթարկելով աշխատավարձի «ձախ»
հավասարեցումը, բոլոր գործարաններում կիրառելով
պրոգրեսիվ պրեմիալ աշխատավարձի սիստեմը, վերացնել
դիմազրկությունը, հոսունությունը, պրոգուլը, ամենա-
լուրջ ուշադրությունը դարձնել բանմատակարարման, բան-
վորների կուլտուրակա սպասարկման և բնակարանային
խնդիրների վրա։ Տեքստիլի կոմունիստները պետք է նշա-
նաբան ունենան հաշվետու-վերընտրական կամպանիայից
դուրս գալ խրոնիկական ճեղքվածքների լիկվիդացիայով։

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է դառ-
նա մարտական ստուգատես Կենտկոմի վորոշումների և
Ճանապարհների Հաղորդակցության Ժողկոմ ընկ. ԱՆԴՐԵ-
ՅԵՎԻ հրահանգների մարտական ստուգման և կիրառման։
Դեպոյի կազմակերպությունը դեկտեմբեր ամսում պետք
է հիվանդ շոգեքարշերի տոկոսն իջեցնի մինչև 17-ի,
պետք է վերջ տալ դուգյերթի խախտման, դիմազրկու-
թյան, աշխատավարձի «ձախ» հավասարեցման։ Յերկա-
թուղային յուրաքանչյուր կոմունիստ պետք է պայքարի
ռեմոնտի վորակի համար, առողջ շոգեքարշի համար, մար-
տունակ և ճկուն վագոնի և շոգեքարշային պարկի հա-
մար։

Յերկաթուղային կազմակերպությունները պետք է
վճռականապես վերականգնեն տրանսպորտի ապարատը,
մաքրեն այն բյուրոկրատիզմի, դանդաղաշարժության, մեռ-
ցած ու անկենդան ալրմովյան «պրիկազների» և չինով-
նիկական աչքակապության ելեմենտներից։

Միացյալ պլենումը պահանջում է ՇԱՔԱՐԿՈՄԲԻՆԱ-
ՏԻ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՑ անհապաղ կենսագործել Բաղկո-
մի վորոշումները, ամրացնել խորհտնտեսության մեջ մի-
անձնյա ղեկավարությունը, վերջ դնել դիմազրկությանը,
ոպորտունիստական լավատեսության և աչքակապության
տարրերին, ապահովել շաքարի ճակնդեղի և կարտոֆիլի
սերմացույի ֆոնդի ստեղծումն ու մատակարարու-



մը և բոլշևիկորեն նախապատրաստվել հնգամյակի ա-
վարտական տարվա գարնանացանին։

ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ-ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ճյու-
ղերի կոմբջիջները պետք է վճռական պայքար կազմակեր-
պեն խորհրդային ապարատի բյուրոկրատական ելեմենտ-
ների, դանդաղաշարժության, թափթփվածության և համ-
բաքայլ տեմպերի դեմ, ստուգեն Համկոմկուսի Կենտկոմի
վորոշումների կիրառումը քաղաքային և կոմունալ-տնտե-
սության հետագա ծավալման մասին, ամենալուրջ ուշա-
դրություն կենտրոնացնեն կոոպերացիայի աշխատանքնե-
րի և հատկապես խորհրդային առևտրի վորակի լավաց-
ման, պետական առևտրական ապարատի ճկունացման,
անշեղ կիրառելով հոկտեմբերյան պլենումի վորոշումները
խորհրդային առևտրի մասին։

ԺՈՂՍՆՆԴԻ ԲՋԻՋՆԵՐԸ պետք է մանրամասն կեր-
պով պարզեն, թե ինչպես է կիրառված Համկոմկուսի
Կենտկոմի վորոշումը հասարակական սննդի մասին, նը-
րանց վողջ աշխատանքը պետք է լինի մինչև վերջ պայ-
քարել այդ վորոշման լրիվ կիրառման համար։

Բաղկոմի և ԲՎՀ-ի միացյալ պլենումն առաջարկում
է քաղաքի մյուս ձեռնարկություններին և կուսկազմա-
կերպություններին ապահովել բոլոր միջոցներով դեկտեմ-
բերյան գրոհի հաղթանակը և կազմակերպված դիմավորել
հնգամյակի 4-րդ ավարտական տարվան։

Հաշվետու-վերընտրական կամպանիան ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պետք է ոգտագործեն,լրիվ կեն-
սագործելու ՀԱՄ Կ(բ)Կ Կենտկոմի հոկտեմբերի 31 վորոշու-
մը Անդրկովկասի կազմակերպությունների մասին, վճռա-
կանորեն և մինչև վերջ ուղղելու գյուղացիական հարցում
տեղ գտած խոշոր քաղաքական սխալները, վորն արտա-
հայտվել է ինչպես և մեր շրջանում, կոլտնտեսություն-
ների կազմակերպչական-տնտեսական ու քաղաքական ամ-
րացման խնդիրների թերագնահատման մեջ։ Գյուղկոմբը-
ջիջների գլխավոր խնդիրն է այսոր իրենց ամբողջ ուժե-
րը կենտրոնացնել կոլտնտեսությունների կազմակերպչա-

կյան, տնտեսական ու քաղաքական ամրացման վրա, այսինքն կազմակերպել կոլտնտեսական արտադրությունը, ճիշտ և մինչև վերջ կիրառել գործավարձը, կազմել կոլտնտեսության կայուն արտադրական պլանը՝ ամրացնել աշխատանքի դիսցիպլինան, մինչև վերջ հարվածել կարգագական, մանր բուրժուական, սեփականատիրական տրամադրությունները կոլտնտեսություններում, վորոնք արտահայտում են կուլակության ցանկությունները կոլտնտեսությունները ներսից պայթեցնելու համար։

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման հիման վրա պետք է ծավալել և պայքարել կոլտնշարժման բայլշեվիկյան նոր տեմպերի համար։

Հաշվետու-վերընտրական կամպանիան գյուղական կոմբջիջները պետք է օգտագործեն կուս աշխատանքների արմատական վերակառուցման համար գյուղում, յերեսով շրջադարձ կատարելու դեպի կոլտնտեսային արտադրությունը, պլանը, բրիգադը։

Գլխավոր խնդիրն է՝ ստեղծել ուժեղ, քաղաքականապես կայուն կոմբջիջ գյուղում, մաքրելով կուս կազմակերպության առանձին ողակները սոցիալապես անհարազատ, կուլակային, ոպորտունիստական ու քայքայված տարրերից, զինելով գյուղ կոմունիստներին մարքս-լենինյան ուսմունքով, ինչպես և գյուղատնտեսական գիտելիքներով, էլ ավելի ուժգին և անողոք դարձնելով նրանց պայքարը դասակարգային թշնամու՝ կուլակի, նրա իդեոլոգ դաշնակի դեմ և նրանց ագենտուրայի՝ աջ ոպորտունիստների և «ձախ» քյալլագյոզների դեմ։

Լենինականի և շրջանի վողջ կազմակերպությունը ծավալուն բայլշեվիկյան ինքնաքննադատության ալիք բարձրացնելով բոլոր տեղերում վճռականորեն պետք է մերկացնի ոպորտունիստական տարրերին, ինքնահոսի «հերոսներին», մերձկուսակցական քաղքենիներին, թերահավատ ու խուճապային տարրերին, էլ ավելի ուժգին դարձնելով պայքարը ներկա շրջանի գլխավոր վտանգ աջ



ոպորտունիզմի և նրա ջրաղացին ջուր ավելացնող «ձախ» ոպորտունիստների դեմ։

Համ. Կ(բ) Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումների հիման վրա Լենինականի կազմակերպությունը անցյալում իր շարքերում տեղ գտած տասնմանշչինայի և անսկզբունք խմբակայնության դասերը հաշվի առնելով, Կենտկոմի վորոշումների լույսի տակ վերագնահատելով նրանց, պիտի մինչև վերջ մերկացնի տասնմանշչինայի և անսկզբունք խմբակայնության ելեմենտներին, վերջնականապես արմատախիլ անելով նրանց։ Կուսակցության բոլոր բջիջները լուրջ կերպով պետք է դնեն կուս. շարքերի գաղափարական, քաղաքական մարտունակության, մարքս-լենինյան դաստիարակության և բայլշեվիկյան կուսակցականության ու սկզբունքայնության մարտական խնդիրների կատարումը։ Բյուրոների հաշվետու զեկուցումների առթիվ կոնկրետ միջոցառումներ պետք է նշվեն «Պրոլետարսկայա Ռեվոլյուցիա» ժուռնալին ուղարկված ընկ. ՍՏԱԼԻՆԻ նամակի հիման վրա, բայլշեվիզմի պատմության ուսումնասիրության գործը պատշաճ սկզբունքային բարձրության վրա դնելու համար։ Վերընտրական ամբողջ կամպանիան պետք է անցնի ներկուսակցական լայն դեմոկրատիայի և ծավալուն բայլշեվիկյան ինքնաքննադատության նշանաբանի տակ։

Էլ ավելի համարձակ կերպով առաջ քաշելով ղեկավար կուս օրգաններում բանվոր և կոլտնտեսական կոմունիստների նոր կադրեր, ստեղծել այնպիսի ճկուն և կայուն կուսօրգաններ, վորոնք ընդունակ լինեն վերակառուցել կուս աշխատանքը յերեսով դեպի ցեխ, բրիգադ, ագրեգատ, վորոնք ընդունակ կլինեն պայքարել կուսակցության գլխավոր գծի կիրառման, տնտեսական պլանների կատարման համար, վորոնք կկարողանան գլխավորել մասսաների արտադրական վերելքը։

Ուղղելով լենինյան ազգային քաղաքականության կիրառման ասպարեզում կատարված սխալները, մեր բոլոր կուս բջիջները պետք է էլ ավելի ուժեղացնեն մեր պայ-

քարը գլխավոր վտանգ մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, ել ավելի ուժգին սրելով պայքարի բոլոր զենքերը հայկական բուրժուազիայի ռեակցիոն ֆաշիստական կուսակցության՝ Դաշնակցության դեմ, մոչինչ չխնայելով Անդրֆեդերացիայի տնտեսական քաղաքական հիմքերի հետագա ել ավելի ամրապնդման, Անդրկովկասի բանվորա-գյուղացիական մասսաների ինտերնացիոնալ կապի ել ավելի ամրացման գործին։

Լենինականի կուս կազմակերպությունը միասնական կուռ շարքերով, համախմբված Անդրյերկոմի նոր ղեկավարության և Հայկոմկուսի Բոլշևիկյան Կենտկոմի շուրջը, համառ պայքարով կը կենսագործի Համ. Կ(բ)Կ Կենտկոմի պատմական դիրեկտիվները։

ԳՐԱԴԱՐԱՆ

---

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0957058

749-19

II
25126